



☒ 377503, Գյումրի, Շարա Տալյան-1, 2-23-46, 28-70-60, ֆաքս (0312) 3-56-94

377503, Гюмри, Шара Талыана-1, 2-23-46, 28-70-60, факс (0312) 3-96-54

N 04-98-894

«19» 10.2015թ.

<Նորաշեն> ՆՏ ԱԿ տնօրեն

պ-ն Գ.Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 15.10.15թ. N41-Ա գրության. կապված Շիրակի մարզի Ամասիա համայնքի 25-րդ փողոց 4 շենքի հասցեում վերակառուցման համար նախագծա-նախահաշվային աշխատանքների՝ անհրաժեշտ 50կՎտ եռաֆազ հոսանքի համար էլակետային տվյալներ և միացման վճարի հաշվարկի տրամադրման հետ. հայտնում ենք, որ տարածքը, որը պատկանել է (<ՎՏԲ Հայաստանյան բանկ ՓԲԸ –ը ,նախկին Հայինայբանկ) և համաձայն նախկինում գործող էլ.սնուցման սխեմայի ունեցել է 10կՎտ եռաֆազ հոսանք և իրականացվել է .

- «Ամասիա» 110/35/10կՎ ԵԿ –ի <Շ/Կ> 10կՎ ուղղությունից սնվող ՏԵ-9005-ի ցածր լարման վահանից:
- Վերը նշված շենքի էլ.համակարգին անհրաժեշտ 50կՎտ հզորության համար սնումը կարելի է իրականացնել նույն ՏԵ-9005 ենթակայանի ցածր լարման վահանից, հզորության ավելացման պայմանով:

Տեղեկացնում ենք, որ օբյեկտների էլ. համակարգի էլեկտրական ցանցին միացումը իրականացվելու է համաձայն ԷՄՕԿ-ի թիվ 2 գլխի պահանջների:

Կից. սպառման համակարգը էլ.ցանցին միացնելու միացման վճարի հաշվարկ-1 էջ:

Տնօրեն

Գ.Բաղդասարյան

Սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու համար

միացման վճարի հաշվարկ

Համաձայն 7.12.11թ. N568Ն Որոշման՝ ՀՀ Հանրային Ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 21/ի N659 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

3) Հավելվածի N1 մեթոդիկայի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<2. 0.4կՎ լարմանը միացվող առանձնատների և առևտրային ապառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման վճարները (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$V_{ստ} = V_h + V_{փ} * \eta_{հզ} * \sigma_q$,

Որտեղ՝

V_h - հաստատուն ծախսերի մեծությունն է, որն ընդունվում է հավասար 203000 դրամի,

$V_{փ}$ -փոփոխական ծախսերի մեծությունն է, որը յուրաքանչյուր կՎԱ-ի համար ընդունվում է հավասար 7500 դրամի,

$\eta_{հզ}$ -դիմող անձի կողմից պահանջվող հզորությունն է (կՎԱ),

σ_q - ծախսագրության գործակիցն է, որը բացի Երևան քաղաքից , ՀՀ մյուս տարածքներում հավասար է 1-ի>

Համաձայն ' <Նորաշեն> ՆՏ ԱԿ-ի 15.10.15թ. N41-Ա գրության պահանջված հզորությունը 50կՎտ և <ՀԷՑ> ՓԲԸ <Ամասիա> մասնաճյուղի կողմից տրված 01.03.2003թ. N04 տեխնիկական պայմանների տրված 10կՎտ եռաֆազ


Սպառողի պահանջվող հզորությունը՝ 50կՎտ- 10կՎտ =40կՎտ

Մնող ցանցի լարումը 0.4կՎ

Գծի երկարությունը- 50մ

$V_{ստ} = 203000 + 40 \times 7500 = 503000$ դրամ

<Ղարս> մասնաճյուղի ԱՏԲ-ի պետ

 *Ա.Քերոբյան*